



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԻ ՁԵՎԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 17.3 կետի 27-րդ ենթակետի պահանջներով,

հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 03.06.2016թ. թիվ 172-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգի 22-րդ կետը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Հաստատել փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտի ձևը և նկարագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտ ստանալը փաստաբանին չի զրկում իր վկայականը և արտոնագիրը զուգահեռ օգտագործելու իրավունքից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

01 մարտի 2018թ.
թիվ 107-Լ
ք. Երևան